ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի մարտի 06-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» պայմանագրում 2020 թվականի ապրիլի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխությունների առաջացման պատճառ՝

Կողմերի որոշմամբ նվազեցվել է պայմանագրով նախատեսված ապրանքի միավորի գինը:

Փոփոխությունների նկարագրություն՝

- պայմանագրի 3.1 կետում «13 516 320 (տասներեք միլիոն հինգ հարյուր տասնվեց հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել են «11 962 720 (տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ» բառերով,
- պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ-ում՝ «միավոր գինը/ՀՀ դրամ» սյունակում «348» թիվը փոխարինվել է «308» թվով, իսկ «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» սյունակում «13 516 320» թիվը փոխարինվել է «11 962 720» թվով,
- պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխությունների հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
06.03.2020թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 10 » ապրիլի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 06.03.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին նվազեցնել Պայմանագրով նախատեսված ապրանքի միավորի գինը, ինչով պայմանավորված.

1.1 Պայմանագրի 3.1 կետում «13 516 320 (տասներեք միլիոն հինգ հարյուր տասնվեց հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «11 962 720 (տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր քսա) ՀՀ դրամ» բառերով,

1.2 Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ում՝ «միավոր գինը/ՀՀ դրամ» սյունակում «348» թիվը փոխարինել «308» թվով, իսկ «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» սյունակում «13 516 320» թիվը փոխարինել «11 962 720» թվով,

1.3 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17	Հասցե՝ ՀՀ, 0010 ք. Երևան, Պուշկինի 1
Հ/Հ՝ 900011192151	Բանկ՝ <<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02583241	Հ/հ՝ 1660006430550100
գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝02665864
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն Ա. Դանիելյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«10» ապրիլի 2020թ. կնքված N 1 համաձայնագրի
(Հավելված N 2 « 06 » « 03 » 2020թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	09132200/1	Բենզին ռեգուլյար	11 962 720	11 962 720	11 962 720	11 962 720	11 962 720	11 962 720	11 962 720	11 962 720	11 962 720	**11 962 720**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, 0010 ք. Երևան, Պուշկինի 1
Բանկ՝ <<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/հ՝ 1660006430550100
ՀՎՀՀ՝ 02665064

Տնօրեն Դ. Դանիելյան

/ստորագրություն/